ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«13» 10 2023թ.
No 009294

«ԴԱՓՆԵՎԱՐԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՏԻԿԻՆ ԱՆՈՒՇ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ
(հասցե՝ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 49-24)

Հարգելի՛ տիկին Մարտիրոսյան,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 17-ի ««Դափնեվարդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-03239/23 վարույթը «Խաչլեվան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-03330/23 վարույթին միացնելու մասին» թիվ 453-Ա որոշման պատճենը:

Միաժամանակ, Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ նաև՝ Համակարգ) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Առդիր՝ «3» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ**

Կատարող՝ Թերեզա Հակոբյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (252)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 8 նոյեմբերի 2023 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հոկտեմբերի 2023 թվականի թիվ 453-Ա

«ԴԱՓՆԵՎԱՐԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ ՀԳ-03239/23 ՎԱՐՈՒՅԹԸ «ԽԱՉԼԵՎԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ ՀԳ-03330/23 ՎԱՐՈՒՅԹԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2023 թվականի հոկտեմբերի 17-ի նիստում, քննարկելով «Դափնեվարդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **«Դափնեվարդ» ընկերություն**) վերաբերյալ թիվ ՀԳ-03239/23 վարույթը «Խաչլեվան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **«Խաչլեվան» ընկերություն**) վերաբերյալ թիվ ՀԳ-03330/23 վարույթին միացնելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

«Վավիար Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ նաև՝ **«Վավիար Գրուպ» ընկերություն**) 2023 թվականի օգոստոսի 22-ին Հանձնաժողով է ներկայացրել հաղորդում (այսուհետ նաև՝ **Հաղորդում**)՝ հայտնելով, որ «Դափնեվարդ» և «Խաչլեվան» ընկերությունների կողմից իրացվում են «Վավիար Գրուպ» ընկերությանը պատկանող թիվ 32356 հերթական համարով գրանցված «ԲԱԶԻԿՅԱՆՆԵՐԻ ԱՐԻՇՏԱ» ապրանքային նշանին շփոթելու աստիճանի նման «X&L IGITYAN'S ARISHTA ԻԳԻԹՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ Գավառի տնական ԱՐԻՇՏԱ» ապրանքային նշանով արիշտաներ:

Հաղորդմանը կից ներկայացվել են գնված արիշտաները (համապատասխան անդորրագրերով)՝ արտադրված «Դափնեվարդ» ընկերության կողմից 2023 թվականի հունիսի 11-ին և «Խաչլեվան» ընկերության կողմից՝ 2023 թվականի հունիսի 16-ին ու 17-ին:

Հաղորդման հիման վրա Հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 5-ի ««Դափնեվարդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 391-Ա որոշմամբ հարուցվել է թիվ ՀԳ-03239/23 վարույթը, իսկ ««Խաչլեվան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 392-Ա որոշմամբ հարուցվել է թիվ ՀԳ-03330/23 վարույթը՝ «Դափնեվարդ» և «Խաչլեվան» ընկերությունների կողմից «X&L IGITYAN'S ARISHTA ԻԳԻԹՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ Գավառի տնական ԱՐԻՇՏԱ» ապրանքային նշանով արիշտա իրացնելու միջոցով շփոթության առաջացման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի սեպտեմբերի 11-ի «Դիտանցում իրականացնելու մասին» թիվ 147-Ա հրամանի հիման վրա ք. Երևան, Արշակունյաց 15 հասցեում գործող «Սուրմալու» առևտրի կենտրոնում՝ ԱՁ Բալաբեկ Շիրինի Շիրինյանին պատկանող տաղավարում, իրականացվել է դիտանցում, որի արդյունքում կազմվել է թիվ 147 արձանագրությունը:

Թիվ 147 արձանագրության համաձայն՝ ԱՁ Բալաբեկ Շիրինի Շիրինյանին պատկանող տաղավարում վաճառքում առկա է «Դափնեվարդ» ընկերության կողմից 2023 թվականի հուլիսի 25-ին արտադրված «X&L IGITYAN'S ARISHTA ԻԳԻԹՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ Գավառի տնական ԱՐԻՇՏԱ» ապրանքային նշանով արիշտա:

«Վավիար Գրուպ» ընկերության կողմից 2023 թվականի սեպտեմբերի 12-ին Հանձնաժողով են ներկայացվել «Դափնեվարդ» ընկերության կողմից 2023 թվականի հուլիսի 6-ին արտադրված և «Խաչլեվան» ընկերության կողմից 2023 թվականի հունիսի 21-ին արտադրված «X&L IGITYAN'S ARISHTA ԻԳԻԹՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ Գավառի տնական ԱՐԻՇՏԱ» ապրանքային նշանով արիշտաներ՝ համապատասխան անդորրագրերով:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 84-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովն իր որոշմամբ կարող է մեկ վարույթի շրջանակներում միացնել միևնույն սուբյեկտի կատարած՝ մեկից ավելի խախտումների կամ մի քանի սուբյեկտների կատարած նույն կամ համասեռ խախտումների վերաբերյալ վարույթները, եթե այդ վարույթների միջև առկա է փոխադարձ կապ, և դրանց համատեղ իրականացումը կարող է ապահովել վարույթի առավել արագ և արդյունավետ լուծումը:

Վերոգրյալ նորմի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը մի քանի սուբյեկտների կատարած նույն կամ համասեռ խախտումների վերաբերյալ վարույթները Հանձնաժողովի որոշմամբ միացնելու համար որպես պայման է սահմանել վարույթների միջև փոխադարձ կապի առկայությունը և վարույթների առավել արագ և արդյունավետ լուծման ապահովումը:

Տվյալ դեպքում Հանձնաժողովը գտնում է, որ «Դափնեվարդ» և «Խաչլեվան» ընկերությունների կողմից «X&L IGITYAN'S ARISHTA ԻԳԻԹՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ Գավառի

տնական ԱՐԻՇՏԱ» ապրանքային նշանով արիշտայի արտադրության և իրացման գործունեություն իրականացնելու փաստով պայմանավորված թիվ ՀԳ-03239/23 և թիվ ՀԳ-03330/23 վարույթների միջև առկա է փոխադարձ կապ, և դրանց համատեղ իրականացումը կապահովի նշված վարույթների առավել արագ և արդյունավետ լուծումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, 84-րդ հոդվածի 1-ին մասով, 86-րդ հոդվածի 1-ին մասով և 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Դափնեվարդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-03239/23 վարույթը միացնել «Խաչլեվան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-03330/23 վարույթին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀԻՆ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈԽԱՐԻՆՈՂ Տ. ՄԱՐԿՈՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 17
Երևան